ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1–12 ՅՈՒՆՈՒԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ՃԳ. ՏԱՐԻ 1989

«ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲԵՐԴԵՐԸ»

ԼԵՒՈՆ ՋՈՒԳԱՍԶԵԱՆ

1198 թուականից մինչեւ 1375 թուականը գոյութիւն ունեցած Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը հայ ժողովրդի պատմութեան փառաւոր շրջաններից է։ Միջերկրականի ափերին վերստեղծուած հայկական պետականութեան պայմաններում աննախընթաց զարգացում ստացած գրքարուեստը, ճարտարապետութիւնը, նոր, նշանակալից ձեռքբերումներ եղան գրականութեան բնագաւառում, իրենց հետագայ վերելքն ապրեցին բնական գիտութիւնները եւ այլն։

Սովետական Հայաստանում այսօր այս մշակոյթը գերազանցապէս ներկայացուած է կիլիկեան շրջանում ընդօրինակուած, Մաշտոցի Մատենադարանում պահուող ձեռագրերով, որոնք գաղափար են տալիս մանրանկարչական գանձերի, գրականութեան, պատմագրութեան, բժշկագիտութեան, իրաւունքի պատմութեան անգին յուշարձանների մասին։

Սակայն այդ երկերից բացի կայ իրական աշխարհագրական Կիլիկիան՝ հայ արքաների արձանագրութիւնները կրող, հայ քարտաշների, որմնադիրների նշանները պահպանող եկեղեցիների ու ամրոցների Կիլիկիան, որը անմատչելի է բազմաթիւ ուսումնասիրողների համար։

Պատմական այս տարածքի ճարտարապետական կոթողների մասին տարբեր ժամանակներում գրել են Է. Դիւլորիէն, Հ. Ղ. Ալիշանը, Հ. Խալփախչեանը, Մ. Ճեւահիրեանը, Ռ. Էդվարդսը եւ ուրիշներ։

Բազմաթիւ յօդուածներով է նախապատրաստուած Ռ. Էդվարդսի «Հայկական Կիլիկիայի բերդերը» աշխատութիւնը, որը լոյս է տեսել այս տարի Վաշինգտոնում Դումբարթոն Օքս բիւզանդագիտական կենտրոնի միջոցներով։ Այն ամփոփուած է «Դումբարթոն Օքսի ուսումնասիրութիւններ» մատենաշարի քսաներեքերորդ հատորում եւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան ռազմական ճարտարապետութիւնը բնորոշելու առաջին մանրակրկիտ փորձն է։ Գրքի ծաւալուն ներածականը բաժանուած է մի քանի գլուխների, որոնք վերնագրուած են 1) «Պատմական խորք», 2) «Հայկական ամրութիւնների յատկանիշները, քսան տարբերիչ առանձնայատկութիւններ», 3) «Կիլիկեան ամրութիւնների շարուածքը», 4) «Հայկական ռազմական ճարտարապետութեան տիպաբանութիւնը», 5) «Արաբական, բիւզանդական եւ Խաչակրաց ռազմական շինարարութիւնը Կիլիկիայում», 6) «Հայկական ամրութիւնների ժամանակագրութիւնը», 7) «Ռազմական ճարտարապետութեան դերը միջնադարեան Կիլիկիայում, ոչ քաղաքային ստրատեգիայի յաղթանակը»։

Այս գրքում ներկայացուած են այժմ դեռեւս կանգուն եօթանասունհինգ ամրոցներ, ըստ Ռ. Էդվարդսի՝ կիլիկեան ամրութիւնների մեծ մասը, բայց նրա իսկ խոստովանութեամբ, յայտնաբերման կարօտ են մնում շատ հայկական բերդեր։

Աշխատութեան հեղինակի կարծիքով, այս շինութիւնները բազմաթիւ ընդհանրութիւններ ունեն պատմական Հայաստանի նմանօրինակ կառոյցների հետ։ Գրքի ընթերցումից երեւում է, որ

Հայերը տեսական ուժեղ պատրաստուածութիւն ունէին ռազմական շինարարութեան ասպարէզում: Կիլիկիայում բերդերի յատակագծերի մէջ նորամուծութիւնների բացակայութիւնը արտացոլում է Հայերի թշնամիների պաշարողական գիտելիքների յարաբերական յետամնացութիւնը, որովհետեւ ռազմական շինարուեստը միշտ պատասխանում է պաշարողական պատերազմի բնոյթին: Հայրենիքից Կիլիկիա բերուած նախագծերը հարկ չկան կատարելագործելու, որովհետեւ դրանք լաւ էին ծառայում Հայերին: Այդ կողմներում հանդէս են գալիս հայկական աւանդական յատկանիշները Միջերկրականի եւ արեւելքի անտիկ բերդաշինութեան աւանդոյթների հետ մէկտեղ, ըստ որում վերջիններս հասցուած են զարգացման բարձր մակարդակի:

Կիլիկիայում եղած արաբական եւ բիւզանդական բերդերը Հայերի ճարտարապետութեան վրայ ոչ մի էական ազդեցութիւն չթողեցին, որովհետեւ դրանց մի մասը գտնւում էր կիսակործան վիճակում կամ ծածկուած էր նոր շինութիւններով: ԺԲ.դ դարում հայ բերդաշինարարների համար անհետեւանք անցաւ եւ Խաչակրաց հարեւանութիւնը: Ռ. Էդվարդսը գտնում է, որ ճիշտ հակառակը՝ Եւրոպացիների համար շատ արդիւնաւէտ եղաւ ծանօթացումը Հայոց ամրոցաշինութեան սկզբունքներին:

Կիլիկիայի առանձին բերդերի պարագայում Հայերի հեղինակ լինելը հեշտօրէն ապացուցւում է շինարարական արձանագրութիւնների առկայութեամբ: Խօսքը վերաբերում է Թամրութի, Սիսի, Մանչիլիկի (Նղի՞ր) կառոյցներին: Որոշ դէպքերում, օրինակ Կոռիկոսում, Սելեւկիայում եւ Անաւարզայում Հայերը նման յիշատակագրութիւններ են թողել այն ոչ հայկական ամրութիւններում, որոնք վերականգնել են: Ներկայումս միայն այս վեց բերդերում է, որ մնացել են հայերէն արձանագրութիւնները: Ռ. Էդվարդսի քննած եօթանասունչինգ ամրոցներից քառասունչորսը ամբողջովին Հայերի կառուցածն են, որ հաստատւում է կիլիկեան թագաւորութեան շրջանի ժամանակագրութիւնների տուեալներով: Այս ձեւով է հաստատւում Անաւարզայի, Զանդիրի (Պապեռոն), Գեբենի (Կապան), Գիւլեկի (Գուզլակ, Կուկլակ, Գոգուլաթ), Լամբրոնի, Սարվանդիքարի, Սիքի, Վահկայի ծագումը:

Նկատուել է, որ կիլիկեան բերդերի պարիսպները համապատասխանում են իրենց հիմքի ձեւերին՝ օրինակ, ժայռերի կորագծերին: Բնական ժայռապատերը, խութերը, ցցուածքները, բարձունքները այստեղ օգտագործւում են որպէս պաշտպանական միասնական համակարգի մասեր: Այդ բերդերում հակառակորդի սակրաւորների քայքայիչ աշխատանքը բացառւում է, որովհետեւ պարսպապատերի արտաքին մակերեսին դուրս ցցուող անկիւններ չկան: Այստեղ օղակաձեւ պատերը որպէս կանոն, թէ՛ դրսից, եւ թէ՛ ներսից կազմուած են անմշակ քարերից: Դրանք թեթեւակի դէպի ներս են ուղղուած: Այդ կարգի պատերը սկիզբ են առնում ժայռէ հիմքի մէջ փորուած ոչ խոր խրամատից եւ դրանց ներքեւի մասը աւելի հաստ է, քան վերեւի հատուածը: Մեծ կայազօր ունեցող ամրոցների ներսում ճարտարապետները երկու բակեր էին նախագծում: Բացառիկ երեւոյթ է, որ Անաւարզայում կան երեքը: Այդ ներքին բաժինները շատ կարեւոր էին պաշարման ժամանակ: Երբ թշնամին գրաւում էր ներքեւի բակը, պաշտպանները քաշւում էին վերեւինը եւ այնտեղից շարունակում դիմադրել: Հայկական ամրոցներում գլխաւոր կամ մեկուսացած աշտարակներ չէին կառուցում: Անաւարզայում գլխաւոր աշտարակի հեղինակները Խաչակիրներն են, Հայերը այն միայն վերականգնել են: Հայ բերդաշինարարները կիրառում էին կլոր աշտարակները եւ խուսափում ուղղանկիւն կամ բազմանկիւն բաստիոններից: Աշտարակները սովորաբար կիսաշրջանաձեւ եւ պայտաձեւ էին, որպէսզի աղեղնաւորները ցանկացած դիրքից կարողանային նետահարել հեռաւոր հակառակորդին: Հայկական կիլիկեան բերդերի շինարարական օրինաչափութիւններից է օղակաձեւ պարիսպների եւ վերին աշտարակների ատամնաձեւ բնոյթը, ըստ որում ատամների յետեւից պահպանւում էր նեղ անցուղին: Այս ամրութիւններում ներքեւի բակի գլխաւոր դարպասին մօտենալու արահետը միշտ կից է օղակաձեւ պարսպի հիմքին, որ հնարաւորութիւն է տալիս թշնամու վրայ կրակել ու վերեւից: Պահակատից դուրս գտնուող արտաքին ամրութիւնները հազուագիւտ երեւոյթ են հայկական ռազմական ճարտարապետութեան մէջ. որպէս կանոն բերդերի վայրը ընտրում էին մեծ բծախնդրութեամբ եւ տեղանքը ստիպում էր հակառակորդին ընտրելու մօտեցման միակ ուղին: Եւրոպական շինութիւնների նման ջրով լի խանդակ եւ խրամատ կիլիկեան ամրոցները չունեն, որովհետեւ

կառուցուած են ժայռերի վրայ: Հայկական բերդերի բոլոր մուտքերը պաշտպանւում են աշտարակներից կամ գտնւում են են օղակաձեւ մասում: Նկատուել է, որ իբրեւ սկզբունք ամրոցի գլխաւոր մուտքը անցնում է պահակատան միջով: Հետաքրքիր է, որ Կիլիկիայի բերդերի մեծ մասում մուտքերը միացնող կամարները հրակնատների անցքերով են օժտուած եւ հնարաւորութիւն է ստեղծուած վերեւից կրակելու ներս մտնողների վրայ: Այս յատկանիշը համարւում է հայկական եւ այն գոյութիւն ունի Վանի բերդում դեռեւս եօթներորդ դարում: Կիլիկեան ամրոցներում օղակաձեւ պարսպի եւ աշտարակների պատուհանները հրակնատի անցքերի ձեւ ունեն, դրանց մօտենում են պատերի միջով անցնող կեռացող միջանցքով, որտեղ լուսամուտների առաջ կան փոքր կամարով խցեր, որտեղից աղեղնաւորները կարող էին կանգնած կամ ծնկաչոք դիրքով նետահարել թշնամուն:

Հայկական ռազմական ճարտարապետութեան մէջ նկատւում է սրածայր կամարներ եւ աղեղներ կիրառելու հակումը: Գմբեթներն այստեղ հազուագիւտ են եւ այդ իմաստով Ելլան Կալէի ջրամբարը կամ Լամբրոն բերդի բաղնիքը բացառութիւններ են: Կիլիկեան ամրութիւններում կամարակապ գետնայարկերը բազմաթիւ չեն եւ շարունակուող միջանցքների տեսք չունեն: Հայկական բերդերում ամենուրեք կան ջրամբարներ, որոնք յօրինուած են մեծ խնամքով ու շատ խելացի կերպով. այնպէս որ ջրատարը կեռացող գծով իջնի բնական ժայռի մէջ: Ուշագրաւ է, որ Կիլիկիայի ոչ բոլոր ամրութիւններն են օժտուած մատուռով կամ եկեղեցիով, որոշ դէպքերում կայազօրների տրամադրութեան տակ էին գտնւում մօտակայ գիւղերի սրբավայրերը: Հայ բերդաշինարարները այստեղ օղակաձեւ պարիսպների, աշտարակների պահակատների պատերը կառուցում էին մեծ, լաւ տաշուած քարերից բաղկացած պարզ շարուածքով, որովհետեւ յատկապէս այդ մասերում էր հակառակորդը կիրառում պաշարողական գործիքները: Կիլիկիայի Հայերը Բիւզանդացիների նման աղիւս չէին օգտագործում, միայն բերդերի ներսում՝ մատուռի կամ ջրամբարի համար էին պահում այն: Պաշտպանական առաջին գծերում առհասարակ ուժեղ շարուածք էին դնում, իսկ խառն անկանոն շարուածքը հանդիպում է բերդերի ստրատեգիական նշանակութիւն չունեցող մասերում:

Կիլիկեան ամրութիւնները այս բոլոր ընդհանուր յատկանիշներով հանդերձ միատեսակ, միանման չեն: Այստեղ պահպանուած կառոյցները բաժանւում են երեք կարգերի. դիտակէտերի, ազնուականական ամրացուած տների եւ անընդհատ գոյութիւն ունեցող կայազօրների կայանների: Դիտակէտերը փոքր ամրութիւններ էին, նախատեսուած չուրջ հինգ մարդու համար: Վտանգի դէպքում մօտակայ կայազօրներին այդտեղից լուր էին տալիս կրակի կամ ձիաւոր սուրհանդակների միջոցով: Նոյնպիսի նշանակութիւն ունէին մեկուսի վանքերից շատերը, որոնցից տեսանելի էին կարեւոր հովիտներն ու ճանապարհները:

Կիլիկեան ամրութիւնների միւս մասը ուղղանկիւն բնոյթ ունի եւ ժամանակին պատկանել է մանր ազնուականութեան: Սովորաբար դրանք երկյարկանի են եւ չուրջ 200 քառ. մ. տարածութիւն են գրաւում: Թէեւ այդտեղ կարելի է պատսպարուել եւ անգամ նետեր արձակել հակառակորդի վրայ հրակնատների անցքերից, բայց այդուհանդերձ նման ամրութիւնները խոցելի են թւում եւ հիմնականում վայելում են մօտակայ կայազօրային բերդերի պաշտպանութիւնը: Այս կարգի շինութիւնների շարքում իր բնոյթով առանձնանում է Տաւրոսի լեռներում գտնուող, այսօր Սարը Զիչէկ կոչուող համալիրը, որը ամառային պալատ է կամ վանք, բաղկացած բազմաթիւ կառոյցներից, անգամ մատուռից:

Ուշագրաւ է նոյնպէս Տաւրոսում տեղադրուած, ներկայումս Անդիլ կոչուող բերդը, որը թշնամու յարձակման ժամանակ ապաստան է դարձել հայ արքաների համար: Կան երկու կառոյցներ, որոնք կամ այսպիսի կլուծածային տներ են կամ կայազօրային ամրոցներ: Դրանք այսօր կոչւում են Թեքէ եւ Ֆիզ: Երկուսն էլ չորս յարկ եւ աշտարակներով օժտուած անկախ օղակաձեւ պարիսպ ունեն: Լրացուցիչ տարածութիւնը, ինչպէս նաեւ պաշտպանական գծերը ստիպում են ենթադրել կայազօրի գոյութիւնը: Նման կառոյցներից միայն այս երկուսն են, որ լեռների գագաթներին չեն

տեղադրուած։ Բերդերից առաջինը գտնւում է ծովափին, իսկ երկրորդը՝ հարթավայրում։ Կիլիկեան Հայերը երբեք Եւրոպացիներին տիրոյթներ չէին շնորհում լեռներում, ուստի պէտք է ենթադրել, որ դրանք Խաչակրաց ամրութիւններից են եղել։ Այդ բերդերի հայկական շարուածքը յուշում է, որ աշխատող որմնադիրները Հայեր էին։

Կայազօրային ամրոցները պաշտպանողական ուժեղ հնարաւորութիւններով օժտուած փոքր կամ մեծ շինութիւններ են, որտեղից լաւ դիտելի են զօրաշարժերը ճանապարհներին եւ կարելի է տաս կամ երեսուն մարդկանցով թէ՛ դիմադրել, եւ թէ՛ պաշտպանել ուղիները։

Հայկական ժամանակագրութիւնների համաձայն, Վահկայի, Անաւարզայի, Լամբրոնի նման բերդերը մեծ կայազօրներ ունէին եւ մշտական աթոռանիստներն էին կիլիկեան բարձրաստիճան ազնուականութեան։

Ըստ Ռ. Էդվարդսի, Հայոց թագաւորութեան տարածքի եօթանասունհինգ ամրութիւններից քառասունչորս հայկական կառուցողական ոճի դրսեւորում են եւ վերջիններից տասնչորսը վաղ ժամանակների ոչ հայկական շրջանի մնացորդներ ունեն։ Ոչ հայկական երեսունմէկ բերդերից քսանինը կառուցուած են Արաբների, Բիւզանդացիների, Խաչակիրների միջոցներով, այդ թւում են նշանաւոր Այասն ու Կոռիկոսը։ Սրանցից շատերը մի քանի հայկական յատկանիշներով հանդերձ, յատակագծերով եւ շարուածքով շատ տարբեր են հայկական շինութիւններից։ Այս կարգի յուշարձաններից Դիբի կոչուող ամրոցը հայկական բազմաթիւ առանձնայատկութիւնների շնորհիւ կարող է Հայերի շինածը լինել։

Կիլիկեան աւանների տարածքում մինչեւ օրս պահպանւում են հռոմէական կայսրութեան ժամանակների ամրութիւնները, կարելի է օրինակ այս առումով յիշատակել Անաւարզայի եւ Սիսի ակրոպոլիսը։ Ցայտնի է, որ Կիլիկիայի արաբական նուաճման ժամանակ եօթներորդ դարի երկրորդ կէսից յետոյ լքուած, կիսաւեր բերդերը նորոգուել են եւ համալրուել ռազմական ոյժերով։ Այսպիսի ամրացուած կենտրոններից հարկ է նշել Տարսոնը, Ադանան, Միսիսը (Մամեստիա), Սիսը։ Նոյնը վերաբերում է եւ Անաւարզային, որը պէտք է ուժեղ վնասուած լինէր իններորդ դարի սկիզբին եւ կէսին, ենթարկուելով բիւզանդական զօրքերի յարձակմանը։ Միայն այնտեղ եւ Տարսոնում կարելի է դեռեւս գտնել արաբական նորոգումների հետքերը, որովհետեւ Կիլիկիայի արաբական ռազմական ճարտարապետութիւնից շատ քիչ բան է պահպանուել։ Ե՛ւ Անաւարզայում ե՛ւ Տարսոնում Արաբներից մնացած շէնքերի քարերը հանել եւ կառուցումներ են արել ըստ սկզբնական յատակագծի։ Կիլիկիայի հողում անհամեմատ շատ են բիւզանդական շինարարութեան հետքերը։ Բիւզանդական կառոյցներից են օրինակ Լամասի բերդը, Կոռիկոսի ցամաքային ամրոցը։ Արաբներին Միջերկրականի այս ափերից քշելուց յետոյ, Բիւզանդացիները վերականգնել կամ կառուցել են Անաւարզան. Սարվանդիքարը, Լամբրոնը, Վահկան։ Աւելի ուշ, արդէն Հայերի օրօք դրանք կրկին վերանորոգուել են եւ բիւզանդական յատակագիծը ծածկուել կամ խախտուել է։ Բիւզանդական մասից մնում են միայն օղակաձեւ պարիսպները։

Կիլիկիայի ամրոցաշինութեան մէջ իրենց աւանդն ունեն Հայերից հողեր եւ բերդեր կառուցելու իրաւունք ստացած Խաչակրաց Կարգերը։ Այսպէս՝ Սելեւկիայի հզօր ամրոցը լրիւ շինեցին հիւրընկալ ասպետները, իսկ Տեւտոն ասպետների օրօք գոյացաւ Ամուդայի բերդը։ Վերջիններս վերակառուցեցին եւ Հարունիէի արաբական համալիրը։ Իրենց հերթին Տաճարականները կառուցեցին Թրափեզակի ամրութեան մեծ մասը։ Այս յուշարձանները շատ տարբեր են միմեանցից, քանի որ ստեղծուել են տարբեր ժամանակներում, տարբեր Կարգերի միջոցներով եւ ռազմական տեսութիւնների դրսեւորումներ են։ Թեքէի եւ Քիզի բերդերը հայ որմնադիրների գործերն են յիշեցնում, բայց յատակագծերով նման են արեւելքի Խաչակրաց ամրութիւններին։ Կիլիկեան չորս կենտրոններից Անաւարզան, Սիսը, Թոփրակը եւ Թումլուն Մամլուքների ձեռքն անցնելուց յետոյ, ԺԴ–ԺԵ.րդ դարերում մասնակի նորոգումներ են կրել։

Ժամանակի պատմիչներից Միքայէլ Ասորին հաղորդում է, որ Լեւոն Ա. արքան իր գերիշխանութեան տակ է ունեցել վաթսուներկու ամրոց։ Այս փաստը, ինչպէս նաեւ Անաւարզայի եւ Կոռիկոսի շինարարական արձանագրութիւնները հիմք են տալիս ԺԹ–Ի.րդ դարերի ուսումնասիրողներից

շատերին պնդելու, որ Կիլիկիայի առաջին թագաւոր Լեւոնն է կառուցել ամրութիւնների մեծ մասը, մանաւանդ, որ նրա ձեռքին էին տնտեսական ու վարչական բոլոր միջոցները։ Ռ. Էդվարդսը գրում է, որ ճիշդ չէ, բոլոր բերդերի շինարարութիւնը կապել նրա եւ նրա յաջորդների հետ։ Գիտնականի կարծիքով ԺԱ.րդ դարի վերջին քառորդին Կիլիկիա եկող Հայերը չէին կարող սպասել կիսակործան ամրոցներում մինչեւ թագաւորի անակնկալ յայտնութիւնը։ Թագաւորութիւնը կարող էր ստեղծուել միայն ամրութիւնների ուժեղ համակարգի կողմից ապահովուած քաղաքական եւ տնտեսական կայունութեան պայմաններում։ Այս եզրակացութեան օգտին են խօսում Թորոս Ա. իշխանի Անաւարզայում 1111 թ. եկեղեցի կառուցելու, նաեւ Վահկայում նորոգումներ կատարելու փաստերը։ Հնարաւոր է, որ Լամբրոնին ԺԲ.րդ դարի կէսին արդէն տիրող Հեթումեանները իրենց տոհմական ոստանը պէտք է որ ամրացնէին ու գեղեցկացնէին նոյն այդ ժամանակ։ Ըստ Ռ. Էդվարդսի, Լեւոն Ա.ի ենթակայութեան տակ եղած վաթսուներկու բերդերը կառուցուած էին մինչեւ նրա իշխանութիւնը։ Իսկ նրա օրօք եւ հետագայում՝ ԺԳ.րդ դարում ամրոցաշինութիւնը շարունակուեց նոր թափով։

Կիլիկիայի խոր կիրճերով, անմատչելի սարերով հարուստ տեղանքը բնական պաշտպանական ամբողջութիւն է ինքնին եւ Հայերը, տեղափոխուելով այդտեղ, ամրութիւնների խիտ ցանցով պատեցին լեռները, իրենց հսկողութեան տակ առնելով թէ՛ հիմնական, թէ՛ օժանդակ ուղիները։ Նրանք գրեթէ անկարելի դարձրեցին թշնամու անակնկալ յարձակումները։ Մինչեւ հարթավայրերը հասնելը հակառակորդը միշտ ստիպուած էր ընդհարուել բազմաթիւ բերդերի պաշտպանների հետ, այսպիսով հնարաւորութիւն տալով վերջիններիս ժամանակ շահելու ծանօթ տեղանքում ճակատամարտ տալու համար։

Միջերկրականի ծովափը՝ Կիլիկիայի հարաւային սահմանը թւում է, թէ պիտի լինէր հայկական թագաւորութեան ամենախոցելի թեւը։ Բայց իրականում այն բաւականին դժուարամատչելի էր զօրքերը ցամաք հանելու իմաստով։ Ո՛չ միայն այստեղ եղած մի քանի ամրացուած նաւահանգիստների պատճառով, այլ որովհետեւ մշտական եւ ծանր տիղմը, աւազաթմբերը ջրի տակ դժուարացնում էին նաւերի ափին մօտենալը։ Հայերը բնակութիւն չէին հաստատում ծովափին՝ հին լքուած քաղաքներում եւ այդ իմաստով Այասը բացառութիւն էր։ Հայաբնակ քաղաքները որպէս կանոն գտնւում էին երկրի ներսում, ինչպէս Միսիսը, Ադանան, Սիսը, Տարսոնը։ Հայերը ապրում էին միայն երկու նաւահանգիստներում՝ Այասում եւ Կոռիկոսում, ըստ որում դրանցից միայն առաջինը ունէր քաղաքային բնակչութիւն։

Այասի հետ առեւտրական ուղիներով կապուած Միսիսի շրջակայքի բազմաթիւ կայազօրային բերդերը մտածել են տալիս Այասի վենետիկեան եւ ճենովական առեւտրական տներին տրուող կարեւորութեան մասին։

Հայերը բնակութիւն էին հաստատում Կիլիկիայի լեռնոտ հովիտներում եւ բերդեր սարքում սարերի անմատչելի գագաթներին, ճիշտ այնպէս ինչպէս դա անում էին իրենց պատմական հողում՝ Վասպուրականում եւ Այրարատում։ Երբ թշնամին գրաւում էր հարթավայրերը բնակչութիւնը ապաստան էր գտնում լեռներում։ Ռ. Էդվարդսը գտնում է, որ հայկական պետութեան բնակչութեան մեծամասնութիւնը գիւղացիներ էին, նրանց չէները անմիջապէս փռուած էին մեծ կայազօր ունեցող ամրոցի շուրջը եւ վտանգի դէպքում բնակիչները կարող էին պատսպարուիլ բերդի պարիսպների ներսում։ Հայկական բնակչութեան գիւղացիական բնոյթը ոչ միայն ապահովում էր աւատական կարգերի գոյութիւնը, այլեւ պաշտպանում դրանք կարող միջին դասից։

Սարերի վրայ իշխելով, կիլիկեան Հայերը ոչ միայն տարածում էին իրենց տիրապետութիւնը Անատոլիայի ամենաբեղուն հողագործական շրջանի վրայ, որը աչքի էր ընկնում իր արգասաբեր ընդերքով, ջրի մշտական պաշարներով, մեղմ եղանակներով, այլեւ տուրք էին առնում անցնողդարձող կարաւաններից։ Անհրաժեշտ է յիշել, որ Այասով, ապա Սեբաստիայով ու Երզնկայով էր անցնում Եւրոպայից Պարսկաստան գնացող առեւտրական գլխաւոր ուղին։ Այասում գանձուող հարկերից հաւաքուող գումարից կարող էին վճարել կիլիկեան արքաները նոր ամրոցների կառուցման ծախսերը եւ կայազօրների զօրականների ռոճիկը։

ԺԳ.րդ դարի առաջին տասնամեակում Կիլիկիա այցելած գերմանացի արքեպիսկոպոս Վիլլբրանդ Ֆոն Օլդենբուրգը իր զարմանքն է յայտնում հայկական թագաւորութեան բերդերի առիթով, բայց չի թաքցնում իր յուսախաբութիւնը մայրաքաղաք Սիսը տեսնելով։ Նա նկարագրում է վերջինը իբրեւ անպարիսպ մի գիւղ, իր գովաբանութիւնը պահելով ամրոցի եւ պարսպաւոր պալատի համար։ Նրա թողած Անաւարզայի պատկերից երեւում է, որ անտիկ քաղաքը այստեղ լքուած էր եւ միայն յարակից ամրոցն էր զբաղեցուած։ Ըստ նրա, Միսիսը փոքրաթիւ բնակչութիւն ունէր եւ միայն Տարսոնն էր մարդաշատ, որտեղ գերակշռում էին Ցոյները։

Կիլիկեան պատմութեան եւ մշակոյթի քննութիւնը ցոյց է տալիս, որ ապահովութեան պատճառով յատկապէս լեռներն, եւ ոչ թէ հարթավայրն էր հայկական թագաւորութեան սիրտը։ Դա է պատճառը, որ մայրաքաղաքը Հայերը Անաւարզայից տեղափոխեցին Սիս՝ Տաւրոսեան լեռների ստորոտը եւ նաեւ թագաւորութիւնը գոյութիւնը շարունակեց շուրջ հարիւր տարի մայրաքաղաքը Մամլուքների կողոպտելուց յետոյ։ Թագաւորն ու արքունիքը միշտ հնարաւորութիւն ունէին քաշուելու անմատչելի լեռները։ Զարմանալի չէ, որ գրաղարանների, արուեստանոցների, մանրանկարչական դպրոցների մեծ մասը Տաւրոսի վանքերում եւ ամրոցներում էին։

Բերրի հողերին տիրելու համար, Միջերկրական Ծովի ափը տեղափոխուած Հայերը օգտագործեցին բնական խոչնդոտ հանդիսացող լեռնաստաններն ու բոլոր կիրճերի անցքերի մօտ կառուցեցին շարունակական շղթայով ձգուող ամրոցներ, ճիշտ այնպէս, ինչպէս հազարաւոր տարիներ առաջ արել էին Ուրարտացիներն ու Ռուսա Ա.ն Վանայ լճի ափերին։ Այդ ոչ քաղաքային ստրատեգիան իրեն լիովին արդարացրեց, երեք դար շարունակ ապահովելով հայերի ներկայութիւնը Կիլիկիայում։

Ռ. Էդվարդսի գրքում ներածականին յաջորդող բերդերի ցուցակում (կատալոգում) իւրաքանչիւր շինութիւն մանրամասն ներկայացում է բոլոր ճարտարապետական մանրամասներով ու պատմական անցեալով։ Ներածականին հետեւող առաջին յաւելուածում տրուած են տարբեր կառոյցների շարուածքի վրայ նշանները։ Երկրորդ յաւելուածում բերուած են բիւզանդական եւ Կիլիկիայի բերդերի պատերի շաղախի քիմիական վերլուծութեան արդիւնքները, որոնցից հեղինակը եզրակացնում է, որ Հայերն ու Բիւզանդացիները տարբեր ձեւով էին պատրաստում շաղախը։ Երրորդ յաւելուածում անգլերէն թարգմանութեամբ ներկայացուած է Լեւոն Ա.-ի (1198–99) թագադրութեանը ներկայ ազնուականների ցանկը, ըստ Սմբատ Սպարապետի տուեալների։ Հեղինակի ուսումնասիրութիւնների համար այն էական նշանակութիւն ունի, քանի որ իւրաքանչիւր իշխանի անուան դիմաց նշուած է նրա տիրոյթը։ Գրքի վերջում զետեղուած տեղանունների եւ անձնանունների ցանկերը, ինչպէս նաեւ 300-ից աւելի սեւ ու սպիտակ եւ գունաւոր վերատպութիւնները մեծ կարեւորութիւն են հաղորդում խնդրոյ առարկայ ուսումնասիրութեանը։ Թեմայի բացառիկութեամբ, նոր եւ հարուստ փաստական նիւթերի առատութեամբ, մեթոդաբանական նոր եղանակներով, գիրքը կարող է դասուել հայ ճարտարապետութեան քննութեան նուիրուած լաւագոյն երկերի շարքը։

ATHANASE D'ALEXANDRIE DANS LE FLORILÈGE ARMÉNIEN DU MANUSCRIT GALATA 54 (Deuxième Partie)

PAR

CHARLES RENOUX

La première partie du florilège athanasien conservé par le manuscrit arménien *Patriarcat d'Istanbul Galata 54* (XIVe s., pages 61–102) a été présentée dans un article des *Mélanges Antoine Guillaumont*[1]. L'analyse de la suite du dossier, que les limites imposées à la précédente contribution ne permettaient pas de poursuivre, est menée à terme dans les pages suivantes. Cependant nous reviendrons auparavant sur la cinquième section de la première partie du florilège athanasien[2] – extraits éventuels du *de Incarnatione et contra Arianos* de Marcel d'Ancyre[3] – que nous n'avions pu étudier entièrement[4].

Voici quelques abréviations auxquelles nous aurons fréquemment recours:

CASEY, *Armenian Manuscripts* = R.P. Casey, *Armenian Manuscripts of St. Athanasius of Alexandria,* dans *The Harvard Theological Studies* 24 (1931), p. 43–59.

CASEY, *Letter to the Antiochenes* = R.P. Casey, *The Armenian Version of the Pseudo-Athanasian Letter to the Antiochenes, and of the Expositio fidei (Studies and Documents* 15), London/Philadelphia, 1947.

LAMPE = G.W.H. Lampe, *A patristic greek Lexicon with addenda et corrigenda,* London, 1984.

Lexicon Athanasianum = G. Müller, *Lexicon Athanasianum,* Berlin, 1952.

Mélanges Guillaumont = *Mélanges Antoine Guillaumont. Contributions à l'étude des christianismes orientaux,* Genève, 1988.

Ե. Տայեցի, Սրբոյն Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասցութիւնք.

TAYEC'I, *S. At'anasi* = E. Tayec'i, *S. At'anasi Ałeksandrioy hayrapeti čaṙk', t'ułt'k' ew ənddimasc'ut'iwnk',* Venise, 1899.

THOMSON, *Quotations* = R.W. Thomson, *Quotations from Athanasius in the Root of Faith, dans Armenian and Biblical Studies edited by* M.E. Stone, Jérusalem, 1976, p. 182–203.

CPG = *Clavis Patrum Graecorum* (M. Geerard).

PG = *Patrologia Graeca* (J.-P. Migne).

---

[1] Cf. *Mélanges Guillaumont,* p. 163–171.

[2] *Ibid.,* voir p. 164, la composition du dossier, et p. 168–171, la présentation incomplète des textes composant cette cinquième section.

[3] Cf. *CPG* 2806; *PG* 26, 984–1028.

[4] Cf. *Mélanges Guillaumont,* p. 169.